ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"12" 09 2022թ. N 37-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 47-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 14-րդ և 20-րդ ենթակետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատանքային կարգապահական ներքին կանոնները հաստատելու մասին>> N 47-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) Հավելվածը լրացնել նոր 10.1. կետով հետևյալ բովանդակությամբ՝ <<10.1. Աշխատողի աշխատանքից ազատման դեպքում աշխատանքից ազատման մասին համապատասխան իրավական ակտում նշված ժամկետը (ազատման օրը) համարվում է Նախարարությունում աշխատողի վերջին աշխատանքային օրը:>>:

12.09.2022

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: TERTERYAN VACHE 1201620635

/Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

գ. Երևան